Արձանագրություն N 20/16-2
«ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/142» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան «1» հոկտեմբերի 2020թ.
ժ. 14:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ֆրեդիկ Բարսեղյանը,
Անդամներ՝ Լևոն Ավետիսյանը, Հենրի Դերձակյանը, Սարգիս Բեյբությանը և Քրիստինե Վարդանյանը.
Քարտուղար՝ Արմեն Պետրոսյանը:

1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/16» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«Արմփիթ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00912335, հասցե՝ ք. Աբովյան, Կոտայքի 1/4, էլ հասցե՝ armpeat@gmail.com, հեռ., (099) 661536
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01254973, հասցե՝ ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30, էլ. հասցե eychgroup@gmail.com, հեռ., (091) 404073
«ՏԵԽՆՈԳԼՈԲ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02276089, հասցե՝ ք. Երևան, Գ.Նժդեհի փ. 45շ., 75 էլ հասցե՝ technoglob@mail.ru, հեռ., (095) 909009
«ՏՆՄ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00216627, հասցե՝ ք. Երևան, Օրբելի 33Ա, բն. 15, էլ. հասցե deltant@mail.ru, հեռ., (098) 020304

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների

նախահաշվային արժեքները՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված:

Հ/Բ	Անվանում	Նախահաշվարկային արժեք	«Արմփիթ» ՍՊԸ		«Էյչ Գրուպ» ՍՊԸ		«ՏԵԽՆՈԳԼՈԲ» ՍՊԸ		«ՏՆՄ» ՍՊԸ	
			Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	Առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Գեներատոր	**8100000**	3253203	3904000	6250000	7500000	8088000	-	4800000	5760000
2	Լարման փոխակերպիչ	**570000**	-	-	-	-	-	-	-	-

4. <u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- «ՏՆՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1) տեխնիկական բնութագրում արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացվող ապրանքի քաշը նշված չէ, իսկ չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին,
- «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը չի համապատասխանում «ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/16» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, մասնավորապես՝ մասնակցի կողմից նշված դիզելային բաքի ծավալը, վառելիքի ծախսը, չափերը և քաշը էապես գերազանցում են հրավերով սահմանված պահանջներից,
- «Արմփիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 1.1) արտադրողի անվանումը նշված է արտադրողի երկրի անվանումը, իսկ տեխնիկական բնութագրում շարժիչի անվանումը հստակ նշված չէ, մասնավորապես՝ «կամ համարժեք» բառը հստակ չի սահմանում, թե ինչ շարժիչ ունի առաջարկվող ապրանքը, բացի այդ «Արմփիթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը ստորագրված են և կնիքված, սակայն պետք է հաստատված լինեին էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝

կողմ - 5, դեմ – 0

<u>5. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին</u>

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Որոշում – 20/16-2

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետը չկայացած հայտարարել ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը:
2. Մեկ աշխատանքային օրով կասեցնել ԱԱԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/16 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը:
3. Առաջարկել «ՏՆՄ» ՍՊԸ-ին, «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին և «Արմփիթ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հոկտեմբերի 6-ին ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում.
Կողմ՝ 5, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ Ֆ. Բարսեղյան

գնահատող անդամներ՝ Լ. Ավետիսյան

Հ. Դերձակյան

Ս. Բեյբության

Ք. Վարդանյան

քարտուղար՝ Ա. Պետրոսյան